«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա - «Ներառական կրթության նպատակներն ու խնդիրները»

Առարկա - Դասվար

Հեղինակ - Հասմիկ Մարտիրոսյան

Ուսումնական հաստատություն - Ճամբարակ քաղաքի N4 դպրոց

Բովանդակություն

Ներածություն .....էջ 3
Ներառական կրթության նպատակները .....էջ 5
Ներառական կրթության խնդիրները.....էջ 9
Եզրակացություն.....էջ 13
Գրականության ցանկ.....էջ 14

Ներածություն

Բոլոր սովորողների աշակերտների որակյալ կրթության տրամադրումը լուրջ մարտահրավեր է ուսուցիչների համար; Ներառական կրթությունը ենթադրում է, որ աշակերտներն իրենց ողջ բազմազանությամբ և յուրատեսակությամբ սովորում են կողք- կողքի նույն դպրոցում ու դասարանում: Ներառական կրթությունը շատ բարձր է գնահատում ուսումնական գործընթացում յուրաքանչյուր աշակերտի ներդրումը: Ներառական կրթությունը պահանջում է մասնագետների, ընտանիքների կողմից ուսման գործընթացի վերակառուցում և երեխաների համար լավագույն միջավայրերի ստեղծման ջանքեր, որպեսզի երեխաները հաջողության հասնեն դպրոցում և հասարակական կյանքում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը մինչև 2000-ական թվականները կազմակերպվել է հատուկ դպրոցներում, կամ ընդհանրապես դպրոց չեն հաճախել : Այս երևույթը մարդու իրավունքների խստագույն խախտում էր: 2000 թվականից ի վեր ներառական կրթությունը որպես կրթական բարեփոխումների մի մաս, հանդիսանում է ՀՀ Կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկը : Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (այսուհետ ԿԱՊԿՈՒ) անձանց կրթության մասին օրենքը ընդունվեց 2005 թվականին, որից հետո ներառական կրթությունը ընդգրկվեց կրթության զարգացման պետական ծրագրի մեջ:

2014 թվականի դերտեմբերի 1-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունեց «Հանրակրթության մասին» ՀՀ Օրենքը, որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության: Մինչև 2025 թվականը ՀՀ- ում կներդրվի համընդհանուր ներառական կրթական համակարգ: 2022թվականի սեպտեմբերից Գեղարքունիքի մարզը անցնում է ներառական կրթության, որը կավարտվի 2025 թվականին: 2019 թվականին Կառավարության որոշմամբ նախատեսվեց անցնել Հայաստանում համընդհանուր ներառական կրթության:

Ներառական կրթությունը նշանակում է, որ բոլոր աշակերտները (ուսանողները)՝ անկախ իրենց ֆիզիկական և մտավոր կարողություններից, հաճախում են իրենց տարածքային դպրոց, տարիքին համապատասխան սովորական դասարան և իրենց աջակցում են սովորել և մասնակցել դպրոցական կյանքի բոլոր ասպեկտներում:

Ըստ ընդունված օրենքի Ներառական կրթությունը սահմանվում է որպես ԿԱՊԿՈՒ անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման

միջոցով նրանց համատեղ ուսուցումը հանրակրթական և մասնագիտական ուսուցումը հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ: Իսկ դա ենթադրում է ոչ թե բոլոր երեխաների համար հավասար կրթական հնարավորություններ, այլ նաև առանձնահատկություններից բխող կարիքների բավարարում համատեղ ուսուցման պայմաններում, որի ընթացքում ԿԱՊԿՈՒ անձանց համար կատարվում է առանձնահատուկ պայմանների ստեղծում և ապահովում:

Այսինքն դպրոցը համատեղ ուսուցման կազմակերպման միջոցով ապահովում է ԿԱՊԿՈՒ անձանց ինտեգրում և ոչ թե հնարավորությունների ապահովում[1]:

Ներառական կրթության հիմքում կրթություն ստանալու մարդու իրավունքն է, 1948 թվականի Մարդու իրավունքների հռչակագիրն է, ինչպես նաև1989 թվականի ՄԱԿ-ի կոնվենցիան է:

[1] ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում - Բաց հասարակության հիմնադրամներ / Հայաստան; Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն : 2013թ. - էջ 6

Ներառական կրթության նպատակները

Ներառական կրթությունը նպատակ ունի ապահովելու որակյալ կրթություն՝ խտրականության ցանկացած ձևի բացառման միջոցով: Ներառական կրթությունն ավելին է, քան մասնակցությունը և հասանելիությունը: Այն կոչված է յուրաքանչյուրի անհատական կարողությունների զարգացմանը՝ որակյալ կրթություն տրամադրելու միջոցով: Ներառական կրթությունը չպետք է նույնացվի նաև ինտեգրում հասկացության հետ: Ինտեգրումն ապահովում է ԿԱՊԿՈՒ անձանց մասնակցությունը կրթական գործընթացներում, իսկ ներառումը ամրագրում է որակյալ կրթություն ստանալու բոլորի իրավունքը: Ավելին, ինտեգրման դեպքում աշակերտները իրենք պետք է հարմարվեն առկա դպրոցական համակարգին (առարկայական պլաններին, դասավանդման մեթոդներին, արժեքներին և այլն): Այս դեպքում դպրոցները փորձում են ապահովել անհատական ծրագրեր, տարբերակված մեթոդներ, հատուկ մանկավարժներ, որոնք էլ աավելի են ընդգծում տվյալ երեխայի ԿԱՊԿՈՒ կարգավիճակը և նրան առանձնացնում մյուսներից, ովքեր շարունակում են ուսումնառել ընդհանուր, չտարբերակված մեթոդներով և մոտեցումներով: Ներառական կրթության դեպքում դպրոցն ինքն է փոխակերպվում, որպեսզի բավարարի յուրաքանչյուր անձի առանձնահատուկ կարիքները: Այսինքն, այս դեպքում ոչ թե աշակերտն է հարմարվում դպրոցին, այլ դպրոցն է հարմարվում աշակերտներից յուրաքանչյուրին[2]:

Նոր ձևավորված համակարգը հնարավորություն է ընձեռում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային ընտանիքից անջատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և ներառելով նրան հանրակրթական ուսումնական հաստատությունում: Ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունքում նախատեսվում է ընդլայնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որակյալ կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության համակարգ բոլոր հանրակրթական դպրոցներում:

ԿԱՊԿՈՒ անձինք կարող են ունենալ գրավոր խոսքի, բանավոր խոսքի, ոչ խոսքային, մտավոր, հոգեկան ունակությունների խանգարումներ, սպասարկման

[2] ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում - Բաց հասարակության հիմնադրամներ / Հայաստան; Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն : 2013թ. - էջ 21

դժվարություններ, հենաշարժողական խնդիրներ. լսողության. տեսողության և այլ խանգարումներ:

ԿԱՊԿՈՒ անձ են համարվում նաև հիպերակտիվություն, հատուկ օժտվածություն, դանդաղ մտածողություն ունեցող անձինք: Նման երեխաների առկայության դեպքում պահանջվում է ուսուցչի կողմից անհատական մոտեցում:

Ներառական կրթությունը առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, և ընդհանրապես բոլոր երեխաների, կրթության կազմակերպման պրոցես է:

Ներառականությունը մտածելակերպ է, այն սկսվում և կայանում է նախ մեր մտածողության, համոզմունքների և արժեքների մեջ և նոր միայն քաղաքականության մեջ և պրակտիկայում:

Հասարակության ցանկացած անդամի՝ սկսած մանկապարտեզից, պետք է դաստիարակել հանդուրժողականության և համակեցության կանոններով: Անկախ անձի ֆիզիկական, հոգեկան, մտավոր զարգացվածության վիճակից, պետք է ընդունել նրան այնպիսին, ինչպիսին կա՝ հարգելով յուրաքանչյուրի իրավունքները և արժանապատվությունը:

Ներառական կրթության հիմնական նպատակը երեխայակենտրոն ուսուցումն է[3], որի արդյունքում երեխան սովորում է իր առավելագույն ներուժին համապատասխան:

Ներառական կրթության նպատակներից են նաև ՝

ա. մտավոր,հոգևոր,ֆիզիկական,ունակությունների ձեռք բերում

բ. մասնագիտական կողմնորոշում և մասնագիտական աշխատանքի գործունեության նախապատրաստում

գ. ընտանեկան կյանքի պատրաստվածության ապահովում[4]

դ. վարքի կանոնների տիրապետում, խմբի աշխատանքներին ներգրավվածության ապահովում և այլն:

Հանրակրթության ընդհանուր նպատակը պետք է լինի յուրաքանչյուր երեխայի համար՝ այդ թվում ԿԱՊԿՈՒ անձանց,զարգացման առանձնահատկություններին

---

[3] ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում - Բաց հասարակության հիմնադրամներ / Հայաստան; Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն : 2013թ. - էջ 23

[4] Ներառական կրթության ռազմավարություններ (Դասագիրք) - Մինեսոթայի համալսարան, ԱՄՆ; Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, ՀՀ ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ: 2019թ. - էջ 7

համապատասխան անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացի ապահովումը:

Ներառական դպրոցում պետք է ապահովել ԿԱՊԿՈՒ անձանց համար անհրաժեշտ տարածքներ և կառույցներ: Նրանք պետք է ապահովված լինեն անհատական տեխնիկական միջոցներով՝ հաշվի առնելով կարիքը, դպրոցում պետք է լինեն համակարգչային դասարաններ, վերականգնողական կաբինետների կազմավորում, մարզական և զանգվածային միջոցառումների կազմակերպում, սննդի, բժշկական սպասարկում,առողջարարական և բուժիչ կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում, կենցաղ- տնտեսական, սանիտարա- հիգիենիկ սպասարկում և տվյալ ուսումնական հաստատության կողմից նախատեսված այլ գործառույթների իրականացում[5]:

ԿԱՊԿՈՒ երեխաները պետք է ապահովվեն դասագրքերով, եթե անհրաժեշտ է՝ հատուկ գրենական պիտույքներով ու հարմարանքներով, գիտամեթոդական նյութերով: Գիտամեթոդական նյութերի և նյութատեխնիկական միջոցներով ապահովելը ֆինանսավորվում է պետական բյուջեի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

Ինչպես վերևում նշվեց, ներառական կրթության քաղաքականության հիմքում երեխայակենտրոն մանկավարժությունն է: Մեթոդի կարևորագույն մաս է կազմում բազմամասնագիտական թիմի ստեղծումը:

Ներառական կրթության ներդրումը պահանջում է ավանդական գործելակերպի փոխարինում այլ մոդելներով: Ուժեղ բազմամասնագիտական թիմերը ընդունում են, որ միմյանց և ընտանիքների հետ համագործակցությունը պահանջում է նոր մտածելակերպ և հաղորդակցման ուժեղ հմտություններ: Համագործակցության համար անհրաժեշտ հմտությունները ուսուցիչներին օգնում են բոլոր աշակերտներին և հատկապես՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողներին օժանդակելու հարցում: Թիմի մեջ ներգրավված են ընդհանուր կրթության մանկավարժը, հատուկ կրթության մանկավարժը, հոգեբանը, լոգոպեդը: Այդ աշխատանքներին ներգրավված են պարապող ուսուցիչները, ուսուցչի օգնականը, տնօրենը, փոխտնօրենը, որոշ չափով նաև ՄԿԱ-ն[6]:

---

[5] ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում - Բաց հասարակության հիմնադրամներ / Հայաստան; Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն : 2013թ. - էջ 23

[6] Ներառական կրթության կիրառման 10 խնդիրները: 2016թ. - jam-news.net

Ուսումնական աշխատանքի գծով փոխտնօրենը պատասխանատու է մանկավարժահոգեբանական աջակցությունների ծառայությունների կազմակերպման և դրանց որակի ապահովման համար: Գլխավոր համակարգողը և պատասխանատուն հանդիսանում է փոխտնօրենը: Նա է պահպանում յուրաքանչյուր սովորողի համար կազմված անհատական գործը՝ թղթապանակը: Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալը՝ ՄԿԱ-ն, կազմակերպիչը, նույնպես մասնակցում է ուսումնական հաստատության մանկավարժական աշխատանքներին:

Ուսուցիչը կազմում և վարում է ԱՈՒՊ-ը: Ուսուցիչն է իրականացնում սովորողի դիտարկումը, առաջադիմությանը նպաստող և խոչընդոտող գործոնների բացահայտումը, գնահատումը: Նա համագործակցում է ուսուցչի օգնականի հետ: Ուսուցչի օգնականը օգնում է հանրակրթական պետական և առարկայական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան սովորողների ուսուցման և դաստիարակության պլանավորման և իրականացման գործընթացին: Ուսուցչի օգնականը լիովին աջակցում է ԱՈԻՊ-ի իրականացմանը, իսկ ԿԱՊԿՈԻ սովորողի համար՝ ԱՈԻՊ-ով սահմանված գիտելիքների առնվազն նվազագույն պահանջների յուրացման գործընթացին: Նա մասնակցում է նաև դասի պլանավորմանը, սովորողների մոտ ինքնակառավարման տարրերի ձևավորմանը, մասնակցում է մեթոդմիավորման աշխատանքներին, հարգում և պահպանում է սովորողների իրավունքները և պարտականությունները:

Եթե դպրոցը չունի հոգեբան, հատուկ մանկավարժ, լոգոպեդ, ապա ՏՄԱԿ-ի կողմից աշխատողները պետք է այցելեն դպրոց և աջակցեն դիտարկմանը, կարողությունների գնահատմանը: Պետք է կատարվի անհատականացված պլանավորում: Ծնողը ևս մասնակցում է այդ աշխատանքներին: Նա նախօրոք պետք է տա իր համաձայնությունը ստորագրությամբ: Իսկ եթե ծնողը թույլ չի տալիս, որ երեխան հաճախի դպրոց, դրանով խոչընդոտելով գործընթացին, ապա նրան իրավական պատասխանատվության են ենթարկում: Մի խոսքով ԿԱՊԿՈԻ երեխայի ուսուցման և դաստիարակության կազմակերպման ողջ ընթացքը պահանջում է հետևողական, մանրակրկիտ աշխատանք:

Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման երեք մակարդակ գոյություն ունի՝

1. դպրոցական

2. տարածքային

3. հանրապետական[7]

Հանրապետական մակարդակը ունի համակարգող ֆունկցիա:

Տասնհինգօրյա ժամկետում աջակցության խումբը կազմում է ԱՈՒՊ (ծնողի համաձայնությամբ):

ԿԱՊԿՈՒ սովորողի կրթությունը կազմակերպվում է հետևյալ սկզբունքներով.

1. Դպրոցը հասանելի է և մատչելի;

2. Ստեղծված են մասնակցելու հավասար հնարավորություններ;

3. Ուսուցումը կառուցվում է երեխայի ուժեղ կողմերը հաշվի առնելով;

4. Ծնողի մասնակցությունը;

5. Դպրոց-ընտանիք համագործակցություն:

Որպեսզի ներառականությունը դառնա համընդհանուր, հարկավոր է հետևողական . շարունակական և քրտնաջան աշխատանք:

Ներառական կրթության խնդիրները

Ներառական կրթության իրականացման գործընթացում հանդիպում են բազմաթիվ խոչընդոտներ և խնդիրներ: Դպրոցները մեծամասամբ չունեն ներքին հարմարեցվածություն: Խոսքը վերաբերում է թեքահարթակների առկայությանը շենքի ներսում և դրսում: Հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխան նման պայմաններում հրաժարվում է դպրոց հաճախելուց: Մեծամասամբ սանհանգույցները հարմարեցված չեն: Ներառական դպրոցները հիմնականում չունեն հարմարեցված սպորտդահլիճներ և մասնագետ-ուսուցիչներ, որոնք կաշխատեն ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների հետ: Դասասենյակները ապահովված չեն անհրաժեշտ գույքով: Յուրաքանչյուր դպրոցում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ պետք է աշխատի տարբեր մասնագետներից կազմված աջակցության թիմը՝ հատուկ մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ: Իրականում նման ամբողջական թիմ չի հավաքվում յուրաքանչյուր դպրոցում[8]:

---

[7] Ներառական կրթության ռազմավարություններ (Դասագիրք) - Մինեսոթայի համալսարան, ԱՄՆ; Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, ՀՀ ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ: 2019թ. - էջ 54

[8] ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում - Բաց հասարակության հիմնադրամներ / Հայաստան; Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն : 2013թ. - էջ 8

Դպրոցների ֆիզիկական միջավայրը շատ հեռու է ներառական կրթության համար անհրաժեշտ պայմաններից: Միակ բանը, որը գրեթե բոլոր դպրոցներում կա, մուտքի թեքահարթակն է: Սակայն կան դպրոցներ, հատկապես մարզերում,որոնք վատթար վիճակում են գտնվում: Շենքերը խարխուլ վիճակում են, բացակայում են սանհանգույցները, չկա ջեռուցման համակարգ,դե թեքահարթակների և այլ հարմարությունների մասին խոսք անգամ չկա : Այս առումով վերջին շրջանում զգացվում է կառավարության ջանքերը դպրոցները վերանորոգելու և ԿԱՊԿՈՒ երեխաների համար համապատասխան պայմաններ ստեղծելու համար: Մնացած առումներով ենթակառուցվածքները չեն համապատասխանում ներկայացվող պահանջներին: Մարզադահլիճների, հանդիսությունների դահլիճների, զուգարանների հասանելիության հարցը մնում է անլուծելի[9]:

Խնդիրներ են առաջանում նաև հատուկ կարիքներ ունեցող երեխաների անհատական ուսումնական պլաններ կազմելիս:

Դպրոցներում հաճախ դա համարում են ձևական գործիք, որն ընկալվում է որպես գրավոր փաստաթուղթ, թղթավարության մաս: Ընդհանուր առմամբ, շատ խնդրահարույց է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացը: Երեխաների գնահատման գործընթացը հաճախ շատ կարճ է տևում, ինչը հնարավորություն չի տալիս երեխային տեսնել ավելի ամբողջական, տարբեր իրավիճակներում և ճիշտ գնահատել: Արդյունքում՝ կան մտահոգություններ, որ երեխաների խնդիրները «մեղմ» են գնահատվում, ինչի հետևանքով երեխան չի համարվում կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող, իսկ որոշ երեխաների խնդիրներն էլ թեթև են գնահատվում:Եվ արդյունքում ԱՈՒՊ-ը ձևական բնույթ է կրում: Ուսուցիչներ կան, որոնք առանձնապես ուշադրություն չեն դարձնում անհատական պլանին: ԿԱՊԿՈՒ երեխաները լիովին չեն ներգրավվում հասարակական կյանքում և ընկերական շրջապատում: Նրանց ընդունում են որպես հիվանդ: Դասապրոցեսի ընթացքում նման երեխաները հիմնականում անտեսվում են: Ծնողը երեխային դպրոց է բերում, որպեսզի նա հասարակությունից չկտրվի, դառնա սոցիումի մաս: Սակայն միշտ չէ, որ դա հաջողվում է:

[9] Ներառական կրթության կիրառման 10 խնդիրները: 2016թ. - jam-news.net

Ուսուցիչների շրջանում ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատելու հմտությունների պակաս կա: Հարկավոր է դասընթացներ ավելի հաճախ կազմակերպել և լինել հետևողական:

Այդ պատճառով՝ անհրաժեշտ է ուսուցիչների վերապատրաստման գործում ուսումնասիրել և կիրառել միջազգային լավագույն փորձը, կազմել վերապատրաստողների թիմ, ստեղծել վերապատրաստումների մի քանի թեմատիկ մոդուլներ, նորընտիր տնօրենների, փոխտնօրենների համար նախատեսել պարտադիր դասընթացներ ներառական կրթության վերաբերյալ:

Հարկավոր է նաև մանկավարժական համալսարաններում ներառական կրթությունը դասավանդել ոչ միայն որպես առանձին առարկա կամ թեմա, այլև դիտարկել որպես դասավանդվող բոլոր առարկաների մաս՝ շեշտը դնելով ներառականություն ապահովող մեթոդների ուսուցման վրա:

Այսօր ուսումնառության համընդհանուր ձևավորումը թույլ է տալիս իրականացնել բազմազանության նկատմամբ հանդուրժողականությունը, և այն փաստի ընդունումը, որ մարդիկ տարբեր կերպ են ընկալում ու իմաստավորում տեղեկատվությունը, ճանաչում պատկերները, նրանց մոտ նյութի նկատմամբ հետաքրքրություն առաջանում է դասավանդման որոշակի մոտեցման կիրառման դեպքում:

ՈՒՀՁ-ը ուշադրություն է դարձնում այն իրողությանը, որ ցանկացած դպրոցում սովորում են կրթության ամենատարբեր պայմանների կարիքներ ունեցող բազմազան աշակերտներ: ՈՒՀՁ-ը հրաժարվում է այն տեսակետից, որ սովորողները լինում են «նորմալ» և «ոչ նորմալ», կամ սովորական և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող[10]:

Ներառական դասարաններում բոլոր երեխաներին ամենաարդյունավետ կերպով դասավանդելու համար կիրառվում է մի մոտեցում, որը հայտնի է որպես համատեղ դասավանդում: Ներառական համատեքստում այն նպաստում է կրթության

[10] Ներառական կրթության ռազմավարություններ (Դասագիրք) - Մինեսոթայի համալսարան, ԱՄՆ; Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, ՀՀ ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ: 2019թ.- էջ 13

առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների նկատմամբ խարանի նվազեցմանը և բոլոր աշակերտների ուսուցման բարելավմանը[11]:

Ներառական կրթությունը պետք է սկսել նախակրթարանից: Սակայն մինչև դպրոց հաճախելը, ծնողը երեխային մեկուսացած է պահում: Եվ երբ երեխան հաճախում է դպրոց, նա շատ դժվար է ինտեգրվում: Դպրոցներում, ինչպես նաև հասարակության որոշ հատվածում ԿԱՊԿՈՒ երեխաների հանդեպ կա կարծրատիպային վերաբերմունք: Հաճախ առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների ծնողները բողոքում են ԿԱՊԿՈՒ երեխաներին դասարանում ներգրավվածության համար: Սա խոսում է այն մասին, որ հասարակության ներսում դեռևս չկա ներառականության մշակույթը, որը վաղուց արևմտյան երկրներում հիմնավորված է:

Ներառական կրթության համակարգը կարևորագույն քայլ է ավելի առողջ, հանդուրժող ու հոգատար հասարակություն ունենալու համար:

Հայաստանում հետևողական աշխատանք է պետք, որպեսզի ներառականությունը դառնա մշակույթ, որպեսզի հասարակության յուրաքանչյուր անդամ գիտակցի ,որ ոչ ոք ապահովագրված չէ առանձնահատուկ պայմանների կարիք ունենալուց: Այդ իսկ պատճառով հարկավոր է լինել հանդուրժող, ուշադիր, հոգատար բոլոր մարդկանց, հատկապես՝ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների նկատմամբ:

[11] Ներառական կրթության ռազմավարություններ (Դասագիրք) - Մինեսոթայի համալսարան, ԱՄՆ; Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, ՀՀ ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ: 2019թ.- էջ 30

Եզրակացություն

Ընդհանրացնելով ամբողջ շարադրանքը, կարելի է ասել, որ՝

-Ներառական կրթության հիմնական նպատակը երեխայակենտրոն ուսուցումն է, որի արդյունքում երեխան սովորում է իր առավելագույն ներուժին համապատասխան:

-Մտավոր-ֆիզիկական ունակությունների ձեռք բերումը:

-Մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական աշխատանքի գործունեության նախապատրաստումը:

-Ընտանեկան կյանքի պատրաստվածության ապահովումը:

-Վարքի կանոնների ուսուցումը:

-Հայաստանում գործում է ոչ թե ներառական կրթության, այլ ինտեգրված կրթության մոդելը: ԿԱՊԿՈՒ երեխան ինտեգրվում է դպրոց, կրթություն է ստանում բոլորի հետ միասին, սակայն նրա նկատմամբ կիրառվում է տարբերակված մոտեցում՝ սկսած ԱՈՒՊ-ից մինչ «ներառականների համար» միջոցառումների կազմակերպումը: Կրթության որակ հասկացությունը որևէ կերպ չի առնչվում ՀՀ-ում ներառական կրթություն համակարգի հետ:

-ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ գոյություն ունի կանխակալ և կարծրատիպային վերաբերմունք հասարակության մի հատվածի մոտ: Նման վերաբերմունքը վերարտադրվում է ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների կողմից:

-Դպրոցները մեծամասամբ չունեն ներքին հարմարեցվածություն, կա ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատող տարբեր մասնագետներից կազմված թիմերի պակաս:

Պետք է հասնել այն բանին, որ ներառականությունը դառնա մտածելակերպ, որը սկսվում և կայանում է մեր մտածողության, համոզմունքների և արժեքների մեջ:

Գրականության ցանկ

Հղումներ.

1.https://escs.am/am/static/inclusiveeducation?s=edu&fbclid=IwAR173uQoMbR7P9anpUU6d52Guxl6wRwZUIZ1CalkdCI1oHs_mNzClGNnHiY (Ներառական կրթություն, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն) էս մեկից ծանուցում չենք նշել

2.https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_8.pdf?fbclid=IwAR0EZH0fPFRmLcHxtdJgSzT344OuKvSvDkb6pVXzXyYHmwAiythCg7IkhSc (ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն)

3.https://www.unicef.org/armenia/media/3501/file/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.pdf (էջ 31 - Ներառական կրթության ռազմավարություններ Դասագիրք, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ)

4.https://jam-news.net/am/%D5%B6%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%AB%D6%80%D5%A1%D5%BC%D5%B4%D5%A1%D5%B6-10-%D5%AD%D5%B6%D5%A4%D5%AB%D6%80%D5%B6/